



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Գևորգյանը, Կարեն Մանասերյանը, Արմեն Մարգարյանը, Գեղամ Վարդանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը և Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Սամվել Օրդոյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Նաիրի Հովհաննիսյանը

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 18-ի թիվ 7 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 7 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գլաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3. Գլաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի 2-րդ եռամսյակի ընթացքի հաղորդման մասին:
4. «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի իրավաբանական հասցեն սահմանելու, նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու և Գլաձոր համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 37 որոշման 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու մասին:
5. Գլաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին:
6. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Գոհար Խաչիկի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:
7. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի բնակիչ Մամիկոն Արթուրի Հակոբյանի դիմումի քննարկման մասին:
8. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի բնակիչ Մարիամ Սիսակի Շահբազյանի դիմումի քննարկման մասին:
9. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի բնակիչ Հովիկ Հրաչիկի Հարությունյանի դիմումի քննարկման մասին:
10. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի բնակիչ Անահիտ Սուրենի Հովհաննիսյանի դիմումի քննարկման մասին:
11. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի բնակիչ Բագրատ Արմենի Մարտիրոսյանի ընտանիքին ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:
12. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրը աճուրդով օտարելու համար համաձայնություն տալու մասին:
13. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի դպրոցին հարակից տարածքի չոր և կիսաչոր բարդիները հատելու համար թույլտվություն տալու մասին:
14. Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու և ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:
15. Գլաձորի համայնքապետարանի միջոցներով 2020 թվականի օգոստոս ամսին ձեռք բերված դիզելային վառելանյութից «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին տրամադրելու մասին:

Կողմ-7	Դեմ-0	Ձեռնպահ-0
--------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69/

Լսեցին.

**ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**